

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ  
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴ**

11 մայիսի, 2022 թ.

N 16 - Լ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ  
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021թ.  
ԱՊՐԻԼԻ 14-Ի N 10-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրությունը և Պալատի խորհրդի 2020 թվականի սեպտեմբերի 29-ի N 3-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության ընդհանուր ժողովի անցկացման և պատվիրակների ընտրության կարգը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Պալատի խորհրդի 2021թ. ապրիլի 14-ի N 10-Լ որոշման հավելված 1-ում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

ա) «ՕՐԱԿԱՐԳԸ» բառից հետո ավելացնել հետևյալ պարբերությունը.

Ընթացակարգային հարցեր.

- Քվորում
- հերթական ընդհանուր ժողովի քարտուղարի ընտրություն
- հերթական ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի ընտրություն
- հերթական ընդհանուր ժողովի օրակարգի հաստատում

բ) ուժը կորցրած ճանաչել 1-ին, 2-րդ, 6-րդ և 8-րդ կետերը:

գ) 3-րդ կետը համարակալել որպես 1-ին կետ:

դ) 4-րդ կետը համարակալել որպես 2-րդ կետ:

ե) 5-րդ կետը համարակալել որպես 3-րդ կետ և վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«3.«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի և աշխատակազմի 2021 թվականի գործունեության, ինչպես նաև 2021 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ Պալատի վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվության հաստատում (Ձեկուցող՝ Պալատի վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Արթուր Հակոբյան):»

զ) 7-րդ կետը համարակալել որպես 4-րդ կետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**